ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ 1829—1830 ԹԹ. ԴԱՊԹԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐ

Մ. Ղ. ԳԱՐԲԻՆՅԱՆ

Ռուս-Թուրքական 1828—1829 թթ. պատերազմը, ինչպես հայտնի է, վերջացավ Ադրիանապոլսի պայմանագրով, որ կնքվեց 1829 թ. սեպտեմբերի 2-ին։ Պայմանագրի չորրորդ հոդվածով Ռուսաստանին անցան Սև ծովի արևելյան ափերը՝ Անապայից մինչև Փոթի նավահանգիստը և Ախալցխայի փաշայության մի մասը՝ Ախալցխա ու Ախալքալաք ամրոցներով։ Արևմտյան Հայաստանը վերստին մնաց սուլթանի իշխանության տակ։ Վերադարձվեցին Էրզրում, Կարս, Բայազետ, Բաբերդ, Մուշ, Արդահան, Օլթի, Ալաշկերտ, Խնուս քաղաքները և հարյուրավոր հայաբնակ գյուղեր, որոնց գրավումը ռուսների կողմից մեծ ուրախություն էր պատճառել արևմտահայությանը։

Հաշտության պայմանագիրը ստորագրելուց հետո Էրզրումի, Բայազետի և Կարսի փաշայություններում ապրող հայության վիճակը կրկնակի ծանրացավ։ Պատերազմի ժամանակ հայերը ոգևորությամբ ընդունեցին ռուսներին և ամեն կերպ օգնեցին նրանց։ 1829 թ. հունիսին, օրինակ, 2.000 հայեր միանալով ռուսական զորքերին հերոսաբար մարտնչեցին թուրքերի դեմ և հարյուրավոր զոհերի գնով պաշտպանեցին Բայազետը։ Թուրքական հրամանատարությունը Բայազետում և Կարսում կրած իր պարտությունները արդարացնում էր հայերի դավաճանությամբ։ Հայերը մեծապես աղդել էին նաև Էրզրումի սերասկյարի վրա՝ քաղաքն առանց կռվի հանձնելու գործում։ Թուրքերի վրեժխնդրությունն ավելի գրգռվեց, երբ քաղաքի հայության անունից Կարապետ արքեպիսկոպոսը և Գրիգոր Շաքարճյանը Էրզրումի մատույցներում, հանդիսավոր կերպով, խաչով ու խաչվառով դիմավորեցին Պասկևիչին ու ռուսական զորքերին։ Երբ վերջիններս մոտենում էին Էրզրումին, այնտեղ հասավ Եփրեմ կաթողիկոսի կոնդակը, որով հանձնարարվում էր Կարնո հայոց առաջնորդին հորդորել իր հովվապետության տակ գտնվող հայերին՝ օգնելու ռուսական զորքերին։ Այդ կոնդակը ընկավ թուրք փաշաների ձեռքը։ Էրզրումի հայերին սպասվում էր սարսափելի կոտորած, որը տեղի չունեցավ թուրք փաշաների ատյան կանչված Կարապետ արքեպիսկոպոսի ճարպկության շնորհիվ. նա կաշառել էր թուրք թարգմանչին և աղավաղել կոնդակի բովանդակությունը[1]։

Թե Ադրիանապոլսի խաղաղության դաշնագիրը ինչպիսի տպավորություն թողեց արևմտահայության վրա և ինչ տրամադրություններ առաջ բերեց՝ բացահայտված է հենց իր՝ Պասկևիչի 1829 թ. հոկտեմբերի 10-ի Նիկոլայ I-ին հղած զեկույցում. «Այն խաղաղությունը, որ Ձերդ Կայսերական Մեծությունը բարեհաճել եք շնորհել Բարձրագույն Դռանը, Ձեր օգոստոսափառ անվան օրհ-

---

1 *Տե՛ս Հ. Դ ե ղ ա մ յ ա ն ց, Կարապետ արքեպիսկոպոս, «Փորձ», 1876, № 1, էջ 175։*

նություն բերեց այնքան միլիոնավոր մարդկանց կողմից, բայց այստեղ, Ասիայում, ընդհանուր ուրախության մեջ, այդ հաշտության լուրը իրավացի տրտմության մեջ ձգեց ժողովրդի այն մասը, որը արժանի է մեր կարեկցությանը և մշտապես կրած իր տառապանքներով ու ռուսական զենքի հաջողությանը ցույց տված իր փորձով, և այն դժբախտ ապագայով, որ սպասում է նրան, եթե Ձերդ Կայսերական Մեծության հզոր աջի հովանու ներքո նա չի գտնելու ապահով ապաստան ընդդեմ այն հալածանքների, որ իրեն սպառնում են... Բայազետում 2 հազար հայեր մարտնչում էին մեր զինվորների շարքերում. Էրզրումում քրիստոնյա բնակչության մեծ մասն իր քահանայապետի գլխավորությամբ մեր զորքերին ընդառաջ դուրս եկավ. Կարսում հայերից կազմված մի գումարտակ և մինչև 800 հոգի հեծյալներ պահպանում էին սահմանները հարձակումներից։ Այն ընտանիքների թիվը, որոնց անխուսափելի վտանգ է սպառնում, կարող է հասնել մինչև 10 հազարի։ Բարեհաճեցեք, ո՛վ ամենաողորմած թագավոր, ձեր գթառատ ուշադրությունը դարձնել այս դժբախտ զոհերի վրա և մի թույլ տվեք, որ օսմանցիների ինքնիշխանությունը վրեժ լուծի նրանցից այն հավատարմության համար, որ նրանք ցույց տվեցին Ռուսաստանին»[2]։

Այնուհետև Պասկևիչը կայսրից խնդրում էր թույլ տալ այդ դժբախտ քրիստոնյաներին բնակեցնել Վրաստանում և Հայկական մարզում, անհրաժեշտության դեպքում նաև Հյուսիսային Կովկասում։ Ձնայած նրանց սկզբնական բնակության համար մեծ ծախսեր են պահանջվում, գրում էր Պասկևիչը, բայց դրանք, անկասկած, հետագայում կհատուցվեն առատորեն այդ աշխատասեր և գործունյա ժողովրդի կողմից։ Գաղթողներին օգնելու համար Պասկևիչը ցարից խնդրում էր թույլ տալ յուրաքանչյուր ընտանիքին բաց թողնել 25 ռուբլի նրպաստ այն 100 հազար ոսկուց, որը տրվել էր իրեն ծախսելու քրդերին ռուսների կողմը գրավելու նպատակով, բայց ծախսվել էր ընդամենը 10 հազար ոսկի[3]։

Ռազմական մինիստր Ձերնիշևը 1829 թ. նոյեմբերի 18-ին պատասխանեց, որ «կայսրը բարեհաճել է հավանություն տալ 10 հազար հայ ընտանիքներին գաղթեցնելու և նրանց կարիքների համար ծախսել իր մոտ եղած 90 հազար ոսկին։ Նիկոլայ I-ը միաժամանակ ցանկություն էր հայտնել գաղթականների մի մասին բնակեցնել Ախալցխայում և նրա շրջակայքում, «ուր նրանք օգտակար կլինեն մեր նոր սահմանների պաշտպանության համար»[4]։

Ադրիանապոլսի պայմանագրի 13-րդ հոդվածով Թուրքիայում ապրող քրիստոնյաներին թույլատրվում էր 18 ամսվա ընթացքում վաճառել իրենց անշարժ գույքերն ու կալվածքները և անարգել գաղթել ռուսական սահմանները[5]։

1829 թ. դեկտեմբերի 3-ին Պասկևիչը հայտնում է Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Պ. Դ. Զավիլեյսկուն, թե հաշտության լուրը ստանալով, Թուրքիայում ապրող քրիստոնյաները ցանկանում են գաղթել Ռուսաստանի սահմանները և նրանցից շատերը, որպես առանձին ողորմածություն, խնդ-

---

2 Центральный государственный военно-исторический архив, ф. БУА, д. 1019, թ. 3։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, թթ. 4—5։

5 Տե՛ս «Договоры России с Востоком, составил Т. Юзефович», СПб, 1869, էջ 78—79։

րում են այդ իրավունքը «չպահանջելով ռուսական կառավարությունից ոչ մի օգնություն»[6]։ Պասկևիչն, ընդառաջելով հայերի և հույների ցանկությանը, 1829 թ. հոկտեմբերին հրամանագրում է Էրզրումի, Կարսի, Բայազետի ռուսական զորքերի հրամանատարներին՝ անցագիր տալ այն հայերին և հույներին, որոնք այժմ ցանկանում են գաղթել, առանց կառավարությունից որևէ օգնություն հայցելու[7]։ Գաղթի գաղափարը այնքան խոր էր մտել հայերի մեջ, որ նրանց մի մասը, չսպասելով գարնան բացվելուն, զոհաբերելով անգամ շարժական գույքի մի մասը, ուշ աշնանը սկսեց շարժվել դեպի ռուսական սահմանները։ Չնայած բազմաթիվ դժվարություններին, 1829 թ. վերջերին Գյումուշխանեից Ծալկա գաղթեցին 85 ընտանիք հույներ, Էրզրումի նահանգից Փամբակի գավառը՝ 59 ընտանիք հայ կաթոլիկներ և Բայազետի գավառից Հայկական մարզ՝ 200 ընտանիք[8]։

Գաղթականների խոշոր զանգվածների տեղաշարժը պետք է սկսվեր 1830 թ. գարնանը։ Այդ նպատակով 1829 թ. դեկտեմբերի 3-ին Պասկևիչը հրամանագրում է Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Զավիլեյսկուն, որպեսզի Թուրքիայից գաղթող քրիստոնյաներին բնակեցնելու համար Թիֆլիսում հիմնվի Գաղթականական կոմիտե՝ իր նախագահությամբ (կազմվեց 1830 թ. հունվարի 28-ին)[9], ուղարկում է նաև 13 կետից բաղկացած հրահանգ։ Գաղթի կանոնները և գաղթականներին տրվող արտոնությունները իրենց բովանդակությամբ նույնն էին, ինչ որ 1828 թ. նախատեսվել էին պարսկահայերի համար։ Ըստ նոր հրահանգի արևմտահայ արհեստավորները և առևտրականները պետք է բնակվեին քաղաքներում, իսկ գյուղացիները՝ գյուղերում։ Ընդ որում վերջիններիս համար պարտադիր էր ընտրել իրենց նախկին բնակավայրերի դիրքին և կլիմային համապատասխան վայրեր։ Կոմիտեն պարտավոր էր գաղթականներին ապահովել հողերով՝ յուրաքանչյուր գյուղին իր ընտանիքների թվի համեմատ։ Գաղթականները, որպես անշեղ կանոն, պետք է բնակեցվեին միայն պետական հողերում[10]։ Նոր բնակավայրերում գաղթականները, 1819 թ. հոկտեմբերի 22-ի օրենքի համաձայն, 6 տարի ազատվում էին հարկերից և 3 տարի՝ պարհակներից, իսկ կարիքավորներին փոխարինաբար տրվելու էր դրամական օգնություն (ընտանիքին միջինը 25 ռուբլի)՝ բնակվելուց չորս տարի անց, հետագա 6 տարվա ընթացքում վճարելու պայմանով[11]։

Էրզրումի, Բայազետի և Կարսի հայ գաղթականների և Պասկևիչի միջև 1829 թ. վերջերին և 1830 թ. սկզբներին գործուն բանակցություններ են տեղի ունեցել հիշյալ գաղթականներին իրենց ցանկացած քաղաքներում և գավառներում բնակեցնելու համար։ Այսպես, Էրզրումի նահանգի և քաղաքի հայերի անունից Կարապետ արքեպիսկոպոսը և 29 պատվավոր քաղաքացիներ 1829 թ. դեկտեմբերի 15-ին իրենց ստորագրություններով ու կնիքներով, Սերովբե

---

6 «Акты Кавказской археографической комиссии» (այսուհետև՝ АКАК), т. VII, № 820.

7 Նույն տեղում, № 821։

8 Центральный государственный исторический архив Груз. ССР (այսուհետև՝ ՎԿՊՊԱ), ф. 2, о. 1, д. 2594, թթ. 228—232։

9 АКАК, т. VII, № 822.

10 Նույն տեղում, № 820։

11 Նույն տեղում։

վարդապետ Կարնեցու միջոցով, Պասկևիչին են ներկայացնում մի աղերսագիր, որով խնդրում են «բնակիլ յԱխալցխայ քաղաք և մերձակա գավառսն նորին»[12]։ Բայազետ քաղաքի և նրա գավառների հայերի անունից Մկրտիչ Արծրունին և 11 երևելիներ 1830 թ. փետրվարի 3-ին Թիֆլիսում Պասկևիչին էին ներկայացրել «Ամենախոնարհ խնդիր», որով խնդրում էին. «Շնորհել հասարակութեան մերոց ի բնակութիւն զԳեղարքունի, զԳյոկչայ և շրջակայս ծովափին Սևանայ»[13]։ Կարս քաղաքի և գավառի հայերը ցանկություն էին հայտնել բնակվելու Գյումրի ամրոցում և Շորագյալի, Լոռի-Փամբակի գավառներում[14]։ Դաղթի խնդրով գեներալ Պանկրատևին էր դիմել նաև Էրզրում քաղաքի և նահանգի հայ կաթոլիկների համայնքի առաջնորդ Եփրեմ վարդապետ Սեթյանը, որը ներկայացրել էր քաղաքի և 16 գյուղերի 560 ընտանիքի ցուցակը[15]։

Արևմտահայ գաղթականները բաժանվում էին երեք մեծ խմբի՝ Էրզրումցիներ, կարսեցիներ և բայազետցիներ։ Էրզրումցիներին դաղթի ներշնչողն ու առաջնորդն էր Կարապետ արքեպիսկոպոսը, կարսեցիներին՝ Ստեփան եպիսկոպոս Խաժակյանը, իսկ բայազետցիներին՝ պատվավոր քաղաքացի Մկրտիչ Արծրունին։

Մեծ էր արևմտահայերի՝ ռուսական մարզերը դաղթելու ցանկությունը, բայց միաժամանակ նրանց տարակուսանքի մեջ էր գցել իրենց անշարժ գույքն ու կալվածքները վաճառելու հարցը։ Ցարական կառավարությունը համոզված լինելով, որ արևմտահայերի դաղթելու ցանկությունն անսասան է, ոչ մի ջանք չգործադրեց նրանց անշարժ գույքի և կալվածքների տնօրինման՝ վաճառելու կամ ինչ-որ չափով փոխհատուցում տալու ուղղությամբ։ Այդ տեսակետից ուշագրավ է Ջավիլեյսկու անմարդկային պատասխանը Կարսի հայերին. «Կարսի դաղթականները,— գրում էր նա,— ոչ մի իրավունք չունեն պահանջել ռուսական կառավարությունից հատուցել իրենց կալվածքների համար, քանի որ նրանք չեն դաղթում հրամանատարության դրդմամբ, այլ իրենց սեփական ցանկությամբ, որպեսզի փրկվեն թուրքերի կողմից իրենց սպասվող հալածանքներից և զանազան աղետներից։ Բավական է և այն, որ Ռուսական տիրույթներում նրանց տալիս են պետական հողեր, աղքատներին՝ որոշ նրպաստ, և մի քանի տարով ազատում են տուրքերից ու պարհակներից։ Կալվածքների վաճառքը կախված է գաղթականների սեփական ջանքից։ Կառավարությունը միջոցներ չունի և պարտավոր չի հարկադրելու մնացող բնակիչներին դնել այդ կալվածքները»[16]։

Զմռան երկարատև նախապատրաստություններից հետո 1830 թ. գարնանն սկսվեց արևմտահայերի զանգվածային դաղթը։ Կարսեցիները, որոնք բնակվելու համար ընտրել էին Շորագյալի և Փամբակի գավառները, գարնանը առանց մեծ դժվարության, սեփական միջոցներով տեղափոխվեցին իրենց նոր բնակավայրերը և սկսեցին տներ կառուցել, ցանք կատարել։ Գեներալ Պանկրատևը, հաշվի առնելով Կարսի մոտ լինելը և ռուսական մարզերում պարենի պակասությունը, Կարսի գավառի գաղթականների դաշտերի բերքը գնված

12 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257, 3-րդ մաս, վավ. 41։
13 ՎԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 2594։
14 Նույն տեղում, թթ. 228—232։
15 Նույն տեղում, թթ. 6—7։
16 Նույն տեղում, թ. 118։

հայտարարեց ռուսական կառավարության կողմից և այնտեղ թողեց կապիտան Վոյնիկովին, Մարտիրոս Վեքիլյանին ու 20 կազակների՝ դաշտերը հսկելու և բերքը հավաքողներին օգնելու համար[17]։ Արագ և հաջող ընթացավ նաև բայազետցիների գաղթը։ Մի քանի օրում Բայազետ քաղաքը և պատմական Կոգովիտ գավառը դատարկվեցին իրենց վաղեմի բնակիչներից։ Բայազետը լրիվ դատարկվեց, այնտեղ մնաց ընդամենը 4 հայ ընտանիք։

Գաղթականների ամենամեծ խումբը էրզրումցիներն էին։ Սրանք էլ Կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ 1830 թ. մայիսի 10-ին թողեցին պատմական Բարձր Հայք նահանգը և բռնեցին անակնկալ դժվարություններով լի գաղթի երկար ու տխուր ճանապարհը։ Մայիսի 15-ից հունիսի 5-ը դատարկվեցին Էրզրում, Բաբերդ, Գյումուշխանե, Քղի քաղաքները և Դերջան, Թորթում, Վերին, Ներքին Բասեն, Սպեր, Թիքման գավառները։ Քրդական և թուրքական հրոսակախմբերի հանկարծակի հարձակումները կանխելու նպատակով Պանկրատևը յուրաքանչյուր խմբին կցում էր հայերեն իմացող մեկ սպայի և մի քանի կազակից բաղկացած պահակախումբ։ Գաղթականների հետ միասին Էրզրումից հեռացան նաև ռուսական զորքերը։

Պատերազմի նախօրյակին այս քաղաքն ուներ մոտ 100 հազար բնակիչ[18]։ Հայ հեղինակների՝ Ն. Սարգսյանի, Մ. Միրախորյանի և այլոց տվյալներով դրանցից հայեր էին 4000 ընտանիք կամ շուրջ 20 հազար հոգի, որոնցից տեղում մնացին 128 ընտանիք[19]։

Բավարար քանակով սայլեր չլինելու պատճառով Էրզրում քաղաքից Կարս հասած հազարավոր գաղթականների համար ստեղծվել էր ծանր վիճակ։ Թուրք սայլապանները Էրզրում քաղաքի հայերի բեռները հասցնելով Կարս, ցրվեցին իրենց գյուղերը, և գաղթականներն ստիպված էին շաբաթներով, ամիսներով սնօթևան տառապել Արփաչայ ու Կարսաչայ գետերի հովիտներում, ձորերում։ Քանի որ հուլիսի 5-ին Կարսը պետք է հանձնեին թուրքերին, ռուսական հրամանատարությունը այնտեղ իջևանած Էրզրումի գաղթականներին տեղափոխեց Ախուրյան գետի ձախ ափը՝ մինչև որ փոխադրամիջոցներ կհայթայթվեին։ Ծանր էր մասնավորապես Ախուրյանի ափին մնացած 1800 ընտանիքների վիճակը։ Նոր վերակացու, մայոր Անոսովը, շրջանցելով նախնական տեղաբաշխումը, առաջարկեց նրանց բնակվել այնտեղ, ուր ցանկանում են։ Մոտ 200 ընտանիք մեկնեց Մեծ Ղարաքիլիսա, մյուսներն էլ ցրվեցին Շորագյալի մոտակա գյուղերը՝ սպասելով դարնան գալուն[20]։ Կարս քաղաքի բնակիչները, ավելի քան 600 տուն, բաժանվեցին երեք մասի. առաջին երկուսը բնակվեցին Մեծ Ղարաքիլիսայում, Գյումրիում, իսկ երրորդը, հոգևոր առաջնորդ, արքեպիսկոպոս Ստեփան Խաժակյանի գլխավորությամբ, հաստատվեց Ղփչաղ (այժմ՝ Արթիկի շրջանի Հառիճ) պատմական գյուղում[21]։

Էրզրումի, Բայազետի, Կարսի, Բաբերդի, Արդահանի և հարյուրավոր հայաբնակ գյուղերի միանգամից դատարկվելը հայերից խիստ անհանդըստացրեց թուրքական կառավարությանը, որը չէր սպասում, որ հայերն

17 Նույն տեղում, էջ. 216—217։
18 Տե՛ս Հ. Ֆ. Պ. Լինչ, Հայաստան, ուղևորություններ, հատ. Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 232։
19 Տե՛ս Գ. Աղանյանց, Կարնո գաղթը, Թիֆլիս, 1891, էջ 20։
20 Նույն տեղում, էջ 27։
21 Նույն տեղում, էջ 24—25։

այդպես արագ ու զանգվածաբար կլքեն իրենց հայրենիքը, հարազատների գերեզմանները, սրբավայրերը և կգաղթեն։ Կարծում էին, թե նրանց բռնությամբ գաղթեցնում են ռուսական զորքերը և Կարապետ արքեպիսկոպոսը։ Էրզրումի ռուսական զորքերի հրամանատար գեներալ Պանկրատևը 1830 թ. մայիսի 29-ին տեղեկացնում էր Պասկևիչին, որ Կոստանդնուպոլսում թուրքերը բողոքել են ռուսական դեսպան Օռլովին, թե իբր Էրզրումի ռուսական զորքերը ճնշում են գործադրում հայերի վրա, խախտում պայմանագիրը և բռնությամբ գաղթեցնում[22]։ Պանկրատևը հաղորդում էր նաև, որ ինքը ստացել է Անատոլիայի սերասկյար Օսման փաշայի և Էրզրումի Հաճի-Հասան փաշայի նամակները, ուր ասվում էր. «Թուրքական կառավարությունը, տեղեկանալով Էրզրումի հայոց Կարապետ արքեպիսկոպոսի հակաօրինական արարքների մասին, որը իբր հայերին հարկադրում է գաղթել Ռուսական սահմանները, նրա տեղը ուղարկում է ինչ-որ վարդապետի, որը հանձնարարություն ունի համոզել հայերին մնալու թուրքական մարզերում»[23]։

Պանկրատևն, իհարկե, հակահարված է տալիս կեղծիքին, մատնացույց անելով, որ թուրքերն իրենք են բռնություն գործադրում հայերի նկատմամբ, մտացածին լուրեր տարածում ռուսների մասին, որպեսզի մխիթարեն իրենց։ Նա ուշադրություն հրավիրեց Մուշի փաշայի 500 հոգուց բաղկացած ավազակախմբի վրա, որը խանգարում էր Խնուսի հայերի գաղթին[24]։ Նա իր մոտ հրավիրեց Կարինի նոր առաջնորդ Բարդուղիմեոս եպիսկոպոսին, որպեսզի անձամբ շփվի Էրզրումից գաղթող 1000 ընտանիքից կազմված խմբի հետ ու տեսնի՝ հնարավո՞ր էր գաղթելուց ետ պահել որևէ մի ընտանիք. և ամենուրեք ստանում էր նույն պատասխանը. «Եթե անգամ Քրիստոսն ինքն իջնի երկնքից, որպեսզի ներշնչի մեզ մնալ թուրքական տիրույթներում, մենք նրա խորհրդին էլ չենք հետևելու»[25]։

Բացի զանգվածային այդպիսի մեծ գաղթերին յուրահատուկ անխուսափելի դժվարություններից ու տառապանքներից, թուրք կառավարողներն սկսեցին գաղթողների դեմ հարուցել նաև զանազան արհեստական արգելքներ։ Զգալով, որ անզոր են սովորական կեղծ խոստումներով, հորդորներով, հատ ու կենտ հայերի կաշառելով, որոշ գավառներում թուրք-քուրդ ավազակների միջոցով գաղթողների վրա հարձակումներ կազմակերպելով խափանել գաղթը, գավառներն ուղարկած իրենց գործակալների օգնությամբ արգելեցին թուրքերին գնել գաղթողների անշարժ գույքը և կալվածքները։ Սակայն հայերի գաղթելու ցանկությունն այնքան մեծ էր ու վճռական, որ թուրքերի ձեռնարկած այս ծայրահեղ միջոցը ևս չկարողացավ ազդել նրանց վրա։

Էրզրումի գաղթականների առաջին խումբը, կտրելով մոտ 1000 կմ ճանապարհ և հաղթահարելով բազում դժվարություններ, 1830 թ. հուլիսի 1-ին հասավ Ախալցխա. «Մեք ազգովին,— գրում են նրանք,— քահանայիք և ժողովրդովք ելաք ի Կարնոյ ի մայիս ամսոյ ըսկսեալ ի Ղարս և ի Գիւմրի օր անցուցանելով յուլիսի ա առաք յԱխալցխայ գիւղական բազմութեամբ»[26]։

22 ՎԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 2594, թ. 247։
23 Նույն տեղում։
24 Նույն տեղում։
25 AKAK, т. VII, № 826.
26 ՎԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 2594, թ. 278։

էրզրումի գաղթականների վերջին խմբերը, 2—3 ամիս տառապելով Գյումրիում, Ախալցխա հասան օգոստոս-սեպտեմբեր ամիսներին[27]։ Ազզորում բնակված էրզրումի գաղթականները Կարսում և Արփաչայի ափին կրած իրենց նեղությունների մասին գրում են. «Կամիմք ծանուցանել տէրութեան ձերում, որ Արզրումայ ելած ժամանակներուս յոյժ նեղութիւն կրեցինք, թէ Ղարս և թէ Արփաչային մնալով զամենայն ինչսն մեր վատնեցինք, մնացինք խեղճ ողորմելի, այնչափ մնացինք, որ արևակէզ լինելով և ունեցած թէ փող և հագուստ բոլորովին ոչնչացան, վերջը եկանք Ախալցխայ բնակութիւն չունենալով մնացինք դուրսը, հիվանդութիւն պատահեցաւ մեռեալն մեռաւ...»[28]։

Չնայած թուրք կառավարողների հարուցած բազմաթիվ արհեստական արգելքներին ու խոչընդոտներին, 1829—1830 թթ. էրզրումի, Կարսի, Բայազետի փաշայություններից և Թուրքիայի մյուս գավառներից Հայկական մարզ, Շորագյալի, Փամբակի, Ծալկայի դիստանցիաներ և Ախալցխայի վիլայություն գաղթեցին 14044 ընտանիք կամ ավելի քան 100 հազար հոգի[29]։

Միայն էրզրում քաղաքից և նահանգի գյուղերից գաղթել են 7298 ընտանիք, որոնց մեծ մասը (5000 ընտանիք) բնակվել է Ախալցխա, Ախալքալաք քաղաքներում և շրջակա գյուղերում, 1050 ընտանիք հայեր և հույներ բնակվել են Ծալկայում և նրա շրջակայքում, իսկ 1248 ընտանիք՝ Փամբակի և Շորագյալի գավառներում[30]։ Այս նույն գավառներում բնակվեցին նաև Կարսից և նրա գյուղերից գաղթած 2264 ընտանիք[31]։ Բայազետ քաղաքից և նրա գավառից գաղթած 4215 ընտանիք հայեր բնակություն հաստատեցին Դյոկչայի, Ապարանի, Դարաչիչակի և Սուրմալուի գավառներում։ Կարսի գաղթականներից 200 ընտանիք բնակվեցին Թալինում[32]։

Չնայած մինչև արևմտահայերի գաղթը 8 ամիս ժամանակ կար տներ կառուցելու համար, բայց տեղական իշխանության ներկայացուցիչները ոչինչ

---

27 Նույն տեղում, թ. 310։

28 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ, ֆ. 1, ց. 1, վավ. 27, թ. 2։

29 Արևմտահայ գաղթականների թվի վերաբերյալ կան տարբեր տվյալներ, որոնք տատանվում են 85-ից մինչև 100 հազարի միջև։ Գաղթականական կոմիտեի 1830 թ. հոկտեմբերի 10-ի տվյալներով գաղթականների թիվը կազմել է 85081 հոգի (ՎԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 2594, թթ. 313—315)։ Սակայն կոմիտեն իր հաշվետվության ծանոթության մեջ նշել է, որ իր տվյալները լրիվ և վերջնական չեն կարող լինել, քանի որ Կարսի գաղթականների մի մասը մնացել է տեղում բերք հավաքելու, իսկ գաղթականների ավագների հաշվետվությունները լրիվ չեն։ Բացի դրանից, կոմիտեն արևմտահայ գաղթականների ընտանիքների միջին թիվը հաշվել է 6 հոգի, երբ այն կազմել է 7—8 հոգի։ Բազմաթիվ հայ հեղինակներ (Ալ. Երիցյան, Ա-Դո, Հ. Քոսյան, Ղազար Չարըգ, Վահե Հայկ և ուրիշներ) անդրադարձել են արևմտահայ գերդաստանների բազմանդամ լինելու հարցին, իսկ օտարերկրյա ճանապարհորդները (Ա. Հաքստհաուզենը, Մորից Վագները և ուրիշներ) շարմացել են, որ մի հարկի տակ ապրում են երեք սերնդի 20—50 հոգուց բաղկացած ընտանիքներ։ Արևմտահայ գաղթականների ընտանիքների անդամների միջին թիվը մեր հաշվումներով կազմել է 7—8 հոգի։ Հետևաբար առանց վարանելու կարող ենք պնդել, որ 1829—1830 թթ. գաղթել են 100 հազարից ավելի հայեր։ Այդ տեսակետն է պաշտպանել նաև Ալ. Երիցյանը (տե՛ս Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, Թիֆլիս, 1894, էջ 442)։

30 ՎԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 2594, թթ. 313—315։

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում։

չէին նախապատրաստել։ Առանձնապես ծանր վիճակ էր ստեղծվել Էրզրումից Ախալցխա քաղաք գաղթած հայերի համար։

Քանի որ հին քաղաքը՝ Ռաբատը, ավերված էր և հնարավոր չէր միանգամից մոտ 2500 ընտանիք տեղավորել այնտեղ, Գաղթականական կոմիտեն որոշում է Էրզրումից գաղթած արհեստավորների և առևտրականների համար Փոցխով գետի աջ ափին հիմնադրել քաղաք, որ և տեղի ունեցավ 1830 թ. օգոստոսի 15-ին։ 1831 թ. ավերված Ախալքալաքի տեղում Ախալցխայից տեղափոխված չորս ընտանիքներ կառուցում են տներ, բացում սրճարան, հացի փուռ. շուտով քաղաքը դառնում է բազմամարդ։ Բայազետ քաղաքից գաղթած հայերը պատմական Գավառ (Քյավառ՝ ինչպես արտասանում էին իրենք գաղթականները) ավանի տեղում հիմնադրեցին քաղաք, որ հետո վերանվանեցին Նոր Բայազետ[33]։ 1838 թ. հոկտեմբերի 4-ին Կարսից գաղթած հայերի և Գյումրի ժամանած Նիկոլայ I-ի ներկայությամբ հիմնադրվեց նոր քաղաք ու բերդ, որը կայսրի հրամանով կոչվեց Ալեքսանդրապոլ[34]։

Միանգամից 100 հազար գաղթականների տեղափոխվելը Անդրկովկաս ծանր վիճակ ստեղծեց թե՛ իրենց՝ գաղթականների, և թե՛ կառավարության համար։ Գաղթականները տեղ հասան այն ժամանակ, երբ գարնանացանը վերջացել էր և չկարողացան ցանք կատարել։ Գաղթականական կոմիտեն պարտավոր էր մինչև մյուս տարվա բերքահավաքը, մոտ 12—14 ամիս, նրանց ապահովել պարենամթերքով և սերմնացուով։ Հաշվի առնելով այդ ծախսերը, Պասկևիչը 1831 թ. մարտի 26-ին Նիկոլայ I-ից խնդրում է ևս 380 հազար ռուբլի (արծաթով), քանի որ գաղթականներին անվերադարձ բաց թողած 90 հազար ոսկին սպառվել էր[35]։ «Գաղթականները աշխատասեր և արդյունաբերող են,— պատճառաբանում էր նա,— այս ժողովուրդը, որից ափսոսանքով կրկվեց Թուրքիան, պահանջում է հենց սկզբում աջակցություն և ապահովություն, գոնե ամենակարևոր բաների։ Հետո, անկասկած, նրանք ամեն ինչ հավելյալով կհատուցեն։ Իրենք գաղթականները խնդրում են այժմ միայն նպաստ տալ իրենց, խոստանալով վերադարձնել այդ գումարը գանձարանին, ավելի շուտ, քան թե ցանկանում էր կառավարությունը։ Թողնել առանց ուշադրության գաղթականների կարիքները, իմ կարծիքով, անկարելի է, քանի որ սկզբում ցույց տված հոգատարությունը և ծախսերը չեն հասնի իրենց նպատակին»[36]։

Շնորհիվ այս և նախընթաց դրամական նպաստներին ու այն հոգատարությանը, որը ցույց տվեց Գաղթականական կոմիտեն, արևմտահայ գաղթականները համեմատաբար քիչ ենթարկվեցին այն աղետներին և տառապանքներին, որոնք երկու տարի առաջ բաժին ընկան պարսկահայերին։

Արևմտահայերի վերաբնակեցմամբ կենդանացան Հայկական մարզի այն գավառները, որոնք լրիվ հայաթափ էին եղել կամ մասամբ դարձել մահմեդաբնակ։ Օրինակ, Սևանա լճի ամբողջ շրջակայքում հայաբնակ էին միայն

---

33 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1953, № 5, էջ 51։

34 Տե՛ս Թ. Զ ա ք ա ր յ ա ն ց, Նիկողայոս կայսրը Կովկասում, «Արձագանք», 1884, № 34, 35։

35 AKAK, т. VII, № 829.

36 Նույն տեղում։

Երանոս, Ապարանի մահալում՝ Մուղնի, իսկ Դարաչիչակ մահալում՝ Արզաքյանգ, Ծաղկունք, Բջնի, Ցայջի և Գոմաձոր գյուղերը[37]։

Գաղթականների մոտ մեկ երրորդը (4800 ընտանիք) կազմում էին Արևմտյան Հայաստանի նշանավոր առևտրա-արհեստագործական կենտրոնների՝ Էրզրում, Բայազետ, Կարս և այլ քաղաքների բնակիչները, որոնք մեծ դեր կատարեցին ամբողջ Անդրկովկասի առևտրի և արհեստների զարգացման գործում։ Նրանց շնորհիվ հիմնադրվեցին Ախալցխա քաղաքի աջափնյա մասը, Ախալքալաք, Ալեքսանդրապոլ և Նոր Բայազետ քաղաքները։

Արևմտահայերի զանգվածային գաղթի հետևանքով հիմնովին փոխվեց Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի որոշ գավառների ազգային կազմը։ Բավական է նշել միայն հետևյալ ուշագրավ փաստը. Ռուսաստանին միացնելու նախօրեին Արևելյան Հայաստանի 169.155 բնակչից 111.850-ը կամ 66,2%-ը կազմում էին մահմեդականները, 57.305-ը կամ 33,8%-ը՝ հայերը, իսկ միացնելուց հետո հայերը կազմեցին 58,8%-ը կամ 141.682 մարդ, մահմեդականները՝ 42,2%-ը կամ 99.460 մարդ[38]։ Չնայած ցարական Ռուսաստանի հպատակներ դառնալով արևմտահայերը չէին ազատագրվում սոցիալական ու ազգային ճնշումից, բայց ձեռք էին բերում անձի, գույքի ապահովություն, որից իսպառ զուրկ էին եղել Թուրքիայում և կապվում էին տնտեսապես ավելի զարգացած, մշակույթով ավելի բարձր երկրի հետ։

Հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ, որը լի է եղել հայրենիքից դուրս բազմաթիվ բռնագաղթերով, արևմտահայերի գաղթը ամենախոշոր կանգվածային տեղաշարժն էր, որը կատարվեց առանց հարկադրանքի, առանց օտար նվաճողների մտրակների սպառնալիքի, բարեկամական երկրի՝ Ռուսաստանի զորքերի անշահախնդիր ու հուսալի պաշտպանության ներքո։

ПЕРЕСЕЛЕНИЕ ЗАПАДНЫХ АРМЯН В АРМЯНСКУЮ ОБЛАСТЬ И СОПРЕДЕЛЬНЫЕ РАЙОНЫ В 1829—1830 гг.

М. Г. ДАРБИНЯН

(Резюме)

Адрианопольским мирным трактатом завершилась русско-турецкая война 1828—1829 гг. По этому договору к России были присоединены кавказское побережье Черного моря от Кубани до Поти, а также Ахалцих и Ахалкалак.

Война завершилась победой России, но мирный договор не оправдал вековые чаяния западных армян—получить освобождение с помощью России. Занятые в Западной Армении территории Эрзерумского, Баязетского и Карского пашалыков вновь были возвращены Турции. Адрианопольский договор создал тяжелое положение для армян этих провинций, которые во время войны всеми возможными средствами помогали русским, с оружием в руках сражались против общего врага.

37 Տե՛ս Խ. Հ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում, Երևան, 1959, էջ 15։

38 Նույն տեղում, էջ 18—19։

По тринадцатой статье Адрианопольского договора, подданным обеих держав предоставлялось право в течение 18 месяцев распоряжаться недвижимым имуществом и переселяться в Россию. В 1829—1830 гг. более 100 тысяч западных армян (14044 семейства), опасаясь мести турок, переселились и разместились в Армянской области и в ее сопредельных районах.

Репатриация армян имела большое значение для развития сельского хозяйства, ремесла, торговли, культуры и консолидации армян в Восточной Армении.